# ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՆՁԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]

**ՎԱՐԴՈՒՀԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

*Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան, ՀՀ, Գյումրի*

*Էլ.հասցե՝ manukyanvarduhi.83@gmail.com*

**ՇՈՒՇԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

*Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան, ՀՀ, Գյումրի*

*Էլ.հասցե՝ shushi-grigori@mail.ru*

***DOI: 10.24234/scientific.v1i51.302***

**ԱՄՓՈՓՈՒՄ**

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել հետպատերազմյան շրջանում անձի արժեհամակարգային ճգնաժամի հոգեբանական առանձնահատկությունները: Պատերազմից հետո ձևավորվող սոցիալ-հոգեբանական միջավայրը պայմանավորում է անձի արժեքային համակարգի, սոցիալական դիրքորոշումների, վարքային մոդելների և կյանքի իմաստավորման գործընթացների էական վերափոխումներ: Հոդվածում դիտարկվում են հետպատերազմյան տրավմատիկ փորձառությունների ազդեցությունը անձի արժեհամակարգային ապակայունացման գործընթացում, սոցիալական վստահության նվազման հոգեբանական հետևանքները և անձի վարքային արձագանքների առանձնահատկությունները: Տեսական վերլուծության հիմքում դիտարկվել են Մ. Ռոկիչի արժեքների տեսությունը և Շ. Շվարցի արժեքային կողմնորոշումների հայեցակարգը, անդրադարձ է կատարվել Վ. Ֆրանկլի իմաստաստեղծ մոտեցմանը: Հոդվածում արտացոլված են նաև փորձարարական հետազոտության արդյունքները: Փորձարարությունն իրականացվել է հետպատերազմյան փորձառություն ունեցող անձանց շրջանում: Հետազոտության ընթացքում կիրառվել են հոգեբանական զրույցի մեթոդը, Մ. Ռոկիչի «Արժեքային կողմնորոշումներ» մեթոդիկան և հարցման մեթոդը: Հետազոտությամբ հաստատվում է, որ հետպատերազմյան պայմաններում մասնակիցների մեծամասնության մոտ

[1] Սույն հետազոտությունը կատարված է «Հետպատերազմյան շրջանում անձի արժեհամակարգի ճգնաժամի և վարքի տիպոլոգիայի հիմնախնդիրներն ու հաղթահարման ռազմավարությունները» վերնագրով ՄԹ-ի շրջանակում:

առաջնային են դարձել անվտանգության, ընտանիքի պահպանման և հոգեբանական կայունության հետ կապված արժեքները, մինչդեռ նվազել են մասնագիտական ինքնիրացման, սոցիալական ակտիվության և ապագայի պլանավորման հետ կապված արժեքային կողմնորոշումները: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հետպատերազմյան արժեհամակարգային ճգնաժամը հիմնականում արտահայտվում է անձի ներքին հոգեբանական հավասարակշռության խաթարմամբ և ապագայի նկատմամբ անորոշության խորացմամբ: Միևնույն ժամանակ որոշ մասնակիցների մոտ նկատվել է կյանքի արժեքների վերաիմաստավորման և հոգեբանական կայունությունը վերականգնելու ձգտում: Հոդվածը կարող է կիրառական նշանակություն ունենալ հետպատերազմյան պայմաններում հոգեբանական աջակցության, սոցիալական ադապտացիայի և հոգեկրթական ծրագրերի մշակման գործընթացներում:

***Բանալի բառեր՝*** *հետպատերազմյան շրջան, արժեհամակարգային ճգնաժամ, հետտրավմատիկ սթրեսային խանգարում, սոցիալական վստահություն, հոգեբանական ռեզիլենտություն, արժեքային կողմնորոշումներ, հետտրավմատիկ աճ:*

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից աշխարհաքաղաքական զարգացումների պայմաններում պատերազմները շարունակում են մնալ հասարակությունների հոգեբանական և սոցիալական կյանքի վրա խորքային ազդեցություն ունեցող գործոններ: Հատկապես փոքր և զարգացող պետությունների համար պատերազմների հետևանքները չեն սահմանափակվում միայն տնտեսական կամ քաղաքական կորուստներով, այլ ընդգրկում են նաև հասարակության արժեքային համակարգի, սոցիալական հարաբերությունների և հոգեկան կայունության լուրջ խաթարումներ: Այս համատեքստում հետպատերազմյան շրջանը հանդես է գալիս որպես բարդ և բազմաշերտ սոցիալ-հոգեբանական իրականություն, որտեղ անհատը կանգնում է սեփական արժեքների, ինքնության և կյանքի իմաստի վերաիմաստավորման անհրաժեշտության առաջ:

Հայաստանի Հանրապետության համար հետպատերազմյան իրողությունները վերջին տարիներին ձեռք են բերել առանձնահատուկ նշանակություն՝ պայմանավորված պատերազմական գործողությունների հետևանքով ձևավորված սոցիալական և հոգեբանական ճգնաժամերով: Պատերազմը և դրա հետևանքները նպաստել են հասարակական տրամադրությունների փոփոխությանը, ապագայի նկատմամբ անվստահության խորացմանը, սոցիալական լարվածության աճին և հոգեբանական տրավմաների տարածմանը: Այս իրավիճակում հատկապես արդիական է դառնում անձի արժեհամակարգային ճգնաժամի ուսումնասիրությունը, քանի որ

արժեքները հանդիսանում են անձի վարքի, ինքնության և սոցիալական ադապտացիայի կարևորագույն կարգավորիչները։

Արժեհամակարգային ճգնաժամը հետպատերազմյան պայմաններում արտահայտվում է արժեքների ապակայունացմամբ, կյանքի իմաստի խաթարմամբ, սոցիալական վստահության անկմամբ և վարքային անկայունությամբ։ Այս գործընթացները կարող են ունենալ ինչպես կործանարար, այնպես էլ վերափոխող ազդեցություն՝ նպաստելով նոր արժեքների ձևավորմանը, հոգեբանական հասունացմանը և հետտրավմատիկ աճին։

Հոդվածի նպատակն է վերլուծել հետպատերազմյան շրջանում անձի արժեհամակարգային ճգնաժամի հոգեբանական առանձնահատկությունները, բացահայտել դրա հիմնական դրսևորումները և ներկայացնել դրանց հոգեբանական հետևանքները։

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Արժեհամակարգը հանդիսանում է անձի հոգեբանական կառուցվածքի առանցքային բաղադրիչներից մեկը, որը պայմանավորում է նրա աշխարհընկալումը, վարքային ուղղվածությունը և կյանքի ռազմավարությունների ձևավորումը։ Հոգեբանական և սոցիոլոգիական գրականության մեջ արժեքները սահմանվում են որպես անձի համար նշանակալի գաղափարներ, նպատակներ և նորմեր, որոնք ուղղորդում են նրա վարքն ու սոցիալական փոխհարաբերությունները։

Միլթոն Ռոկիչի տեսության համաձայն (Rokeach, 1973)՝ արժեքները բաժանվում են տերմինալ և գործիքային խմբերի։ Տերմինալ արժեքները ներկայացնում են կյանքի վերջնական նպատակները, իսկ գործիքային արժեքները՝ այդ նպատակներին հասնելու միջոցները։ Հետպատերազմյան պայմաններում այս արժեքային համակարգը հաճախ ենթարկվում է լուրջ վերափոխումների, քանի որ անհատի առաջնահերթությունները փոխվում են գոյաբանական սպառնալիքների ազդեցության ներքո։

Շալոմ Շվարցի մոտեցմամբ (Schwartz, 1992)՝ արժեքները հանդես են գալիս որպես կյանքի առաջնորդող սկզբունքներ, որոնք ապահովում են անձի ներքին ամբողջականությունն ու սոցիալական կողմնորոշումը։ Սակայն ճգնաժամային իրավիճակներում նախկին արժեքային կառուցվածքները կորցնում են իրենց կայունությունը, և անձը հայտնվում է արժեքային ապակողմնորոշման վիճակում։

Հետպատերազմյան միջավայրում հաճախ առաջնային են դառնում անվտանգությունը, ֆիզիկական գոյատևումը, ընտանիքի պաշտպանությունը և սոցիալական կայունությունը, մինչդեռ նախկինում կարևոր համարվող արժեքները՝ մասնագիտական ինքնաիրացումը, ստեղծագործական զարգացումը և երկարաժամկետ

կենսական ծրագրերը, կարող են ժամանակավորապես երկրորդ պլան մղվել։ Այս գործընթացը հանգեցնում է արժեքների հիերարխիայի փոփոխության և ներքին հոգեբանական հակասությունների ձևավորման։

Դյուրկհեյմի սոցիոլոգիական տեսության համաձայն՝ պատերազմից հետո հաճախ ձևավորվում է անոմիայի վիճակ, երբ սոցիալական նորմերը և արժեքները կորցնում են իրենց կարգավորիչ ուժը։ Այս իրավիճակում անհատը կորցնում է նախկին արժեքային հենարանները և դժվարանում է կառուցել ապագայի հստակ պատկերացում։

Վիկտոր Ֆրանկլի գոյաբանական մոտեցման համաձայն (Frankl, 1963)՝ նույնիսկ ամենածանր պայմաններում մարդը ձգտում է պահպանել կյանքի իմաստի զգացումը, քանի որ հենց իմաստաստեղծ գործընթացն է հանդիսանում հոգեբանական կայունության հիմնական գրավականը։ Հետպատերազմյան պայմաններում, երբ խաթարվում են անձի կյանքի բնականոն հունն ու ապագայի կանխատեսելիությունը, հաճախ առաջանում է ներքին դատարկության, անորոշության և արժեքային ապակողմնորոշման զգացում։

Հետպատերազմյան շրջանը հոգեբանական տեսանկյունից բնութագրվում է բարձր հուզական լարվածությամբ, տրավմատիկ փորձառությունների կուտակմամբ և սոցիալական անորոշությամբ։ Պատերազմը խախտում է մարդու կյանքի սովորական կառուցվածքը, առաջացնում է անվտանգության զգացման կորուստ և ձևավորում մշտական տագնապի մթնոլորտ։

Հետպատերազմյան հոգեբանական վիճակների մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում հետտրավմատիկ սթրեսային խանգարումը (PTSD)։ Այն արտահայտվում է տրավմատիկ իրադարձությունների կրկնվող վերապրումներով, գերզգոնությամբ, հուզական լարվածությամբ, քնի խանգարումներով և սոցիալական մեկուսացմամբ։ PTSD-ն ոչ միայն ազդում է անձի հուզական վիճակի վրա, այլ նաև խաթարում է նրա արժեքային համակարգը և կյանքի իմաստավորման գործընթացները։

Հետպատերազմյան տրավմաների կարևոր առանձնահատկություններից է դրանց կոլեկտիվ բնույթը։ Կոլեկտիվ տրավման ձևավորվում է այն դեպքում, երբ պատերազմի փորձառությունները դառնում են հասարակության ընդհանուր հոգեբանական հիշողության մաս։ Այս իրավիճակում ձևավորվում է ընդհանուր վախի, անվստահության և անապահովության մթնոլորտ, որն ազդում է սոցիալական հարաբերությունների և հասարակական վարքի վրա։

Հոգեբանական տեսանկյունից հետպատերազմյան շրջանում հաճախ դիտարկվում է նաև էքզիստենցիալ ճգնաժամ։ Պատերազմը մարդուն առերեսում է կյանքի վերջավորության, կորստի և մարդկային խոցելիության իրականության հետ։

Արդյունքում խաթարվում են նախկին իմաստային համակարգերը, և անհատը սկսում է վերաիմաստավորել սեփական գոյությունը, արժեքները և ապագայի հեռանկարները։

Հետպատերազմյան շրջանում կարևոր խնդիր է նաև սոցիալական վստահության անկումը։ Պատերազմը նվազեցնում է մարդկանց միջև փոխվստահությունը և խաթարում է ինստիտուցիոնալ վստահությունը պետական ու հասարակական կառույցների նկատմամբ։ Արդյունքում ձևավորվում են սոցիալական մեկուսացման, հաղորդակցության սահմանափակման և հասարակական բևեռացման միտումներ։

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ հետպատերազմյան ճգնաժամը կարող է ունենալ նաև դրական հոգեբանական հետևանքներ։ Հետտրավմատիկ աճի հայեցակարգի ներկայացուցիչների կարծիքով (Tedeschi & Calhoun, 2004)՝ ծանր փորձառությունները որոշ դեպքերում կարող են նպաստել անձի ներքին վերափոխմանը, արժեքների վերագնահատմանը և հոգեբանական հասունացմանը։

Այսպիսով, հետպատերազմյան շրջանը ներառում է ինչպես տրավմատիկ և ապակայունացնող, այնպես էլ զարգացման ներուժ պարունակող հոգեբանական գործընթացներ։

Հետպատերազմյան արժեհամակարգային ճգնաժամի հիմնական դրսևորումներից մեկը արժեքների հիերարխիայի խախտումն է։ Երբ նախկին արժեքային համակարգը կորցնում է իր կայունությունը, անհատը դժվարանում է տարբերակել առաջնահերթություններն ու կառուցել ապագայի հստակ ռազմավարություն։ Կյանքի իմաստի կորուստը հանդիսանում է արժեհամակարգային ճգնաժամի առավել խորքային դրսևորումներից մեկը։ Անհատը կարող է կորցնել հավատը սեփական ապագայի, սոցիալական արդարության և կյանքի նպատակների նկատմամբ։ Այս վիճակը հաճախ ուղեկցվում է ապատիայով, հիասթափությամբ և ներքին դատարկության զգացումով։

Արժեհամակարգային ճգնաժամը հաճախ արտահայտվում է նաև վարքային դեզադապտացիայի ձևով։ Որոշ անհատներ դրսևորում են խուսափողական վարք՝ մեկուսացում, սոցիալական պասիվություն և կախվածությունների ձևավորում։ Մյուսները հակված են ագրեսիվ կամ կոնֆլիկտային վարքի, ինչը պայմանավորված է ներքին լարվածությամբ և սոցիալական անվստահությամբ։ Հետպատերազմյան միջավայրում տարածված են նաև ցինիզմի և նիհիլիզմի դրսևորումները։ Անհատը կարող է կորցնել հավատը բարոյական նորմերի, հասարակական համերաշխության և սոցիալական արդարության նկատմամբ։ Այս երևույթները վտանգավոր են հասարակության համախմբման և երկարաժամկետ զարգացման տեսանկյունից։

Ինքնության ճգնաժամը ևս հանդիսանում է հետպատերազմյան արժեհամակարգային ճգնաժամի կարևոր բաղադրիչ։ Պատերազմական փորձառությունները փոխում են անձի ինքնընկալումը, սոցիալական դերերը և ապագայի մասին պատկերացումները։ Հատկապես պատերազմի անմիջական մասնակիցների և տուժած խմբերի դեպքում ինքնության վերակառուցումը դառնում է բարդ և երկարատև գործընթաց։

Այնուամենայնիվ, արժեհամակարգային ճգնաժամը կարող է դառնալ նաև նոր արժեքների ձևավորման հիմք։ Ճգնաժամային իրավիճակները հաճախ նպաստում են կյանքի իմաստի վերագնահատմանը, սոցիալական կապերի արժևորմանը և հոգեբանական ռեզիլենտության զարգացմանը։

Հետպատերազմյան արժեհամակարգային ճգնաժամի հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունը ենթադրում է տեսական և փորձարարական մոտեցումների համադրում, քանի որ պատերազմական փորձառությունների ազդեցությունն առավել արտահայտված է անձի արժեքային կողմնորոշումների, հուզական վիճակի և սոցիալական վարքի փոփոխություններում։ Տեսական վերլուծությունը ցույց տվեց, որ հետպատերազմյան միջավայրը պայմանավորում է անձի արժեքային համակարգի վերափոխում, հոգեբանական հավասարակշռության խաթարում և կյանքի իմաստավորման գործընթացների փոփոխություն։ Տեսական դրույթների հիմնավորման նպատակով իրականացվել է փորձարարական հետազոտություն։

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հետազոտությանը մասնակցել են հետպատերազմյան փորձառություն ունեցող 25–45 տարեկան անձինք։ Հետազոտության ընթացքում կիրառվել են հոգեբանական զրույցի մեթոդը, հարցման մեթոդը և Մ. Ռոկիչի «Արժեքային կողմնորոշումներ» մեթոդիկան (Տե՛ս տրամագի՛ր 1), ինչը հնարավորություն է տվել բացահայտել անձի արժեքային առաջնահերթությունների, սոցիալական դիրքորոշումների և հոգեբանական արձագանքների փոփոխությունները։

Հետազոտության ընթացքում իրականացված հարցումների և հոգեբանական դիտարկումների արդյունքները ցույց են տվել, որ հետպատերազմյան պայմաններում առավել արտահայտված փոփոխություններ են արձանագրվել անվտանգության, սոցիալական վստահության և կյանքի իմաստավորման հետ կապված արժեքային կողմնորոշումներում։ Մասնակիցների զգալի մասը առաջնային է համարել անվտանգությունը և ընտանիքի կայունությունը, մինչդեռ մասնագիտական

ինքնաիրացման և սոցիալական առաջընթացի արժեքները երկրորդական դիրք են զբաղեցրել:

**Տրամագիր 1.**

**Հետպատերազմյան շրջանում արժեքային առաջնահերթություններ՝ ըստ «Մ. Ռոկիչի արժեքային կողմնորոշումներ» մեթոդիկայի**




Հետազոտական տվյալների հոգեբանական վերլուծությունը ցույց է տալիս, որ հետպատերազմյան պայմաններում անձի արժեքային համակարգը ենթարկվում է ոչ միայն կառուցվածքային, այլև իմաստային վերափոխման: Եթե մինչպատերազմյան շրջանում հարցվածների գերակշիռ մասը առաջնային էր համարել մասնագիտական կայացումը, սոցիալական ակտիվությունը և ինքնաիրացման հեռանկարները, ապա հետպատերազմյան միջավայրում գերակա են դարձել անվտանգության, ընտանիքի պահպանման և գոյաբանական կայունության հետ կապված արժեքները: Այս փոփոխությունը հոգեբանական տեսանկյունից պայմանավորված է տրավմատիկ փորձառության ազդեցությամբ, որի պայմաններում մարդու գիտակցությունը կենտրոնանում է առաջնային պաշտպանական և գոյապահպանական մեխանիզմների վրա:

Ստացված արդյունքները համահունչ են Ա. Մասլոուի պահանջմունքների հիերարխիայի տեսությանը (Maslow, 1970), ըստ որի՝ անվտանգության զգացման խաթարման պայմաններում անձը ժամանակավորապես հետին պլան է մղում ինքնաիրացման և սոցիալական առաջընթացի հետ կապված նպատակները՝ առաջնահերթ դարձնելով ֆիզիկական և հոգեբանական պաշտպանվածությունը:

Հետազոտության ընթացքում արձանագրվել է սոցիալական վստահության նվազում, որը հիմնականում արտահայտվել է միջանձնային հաղորդակցության սահմանափակմամբ և սոցիալական փակվածությամբ: Պատերազմական փորձառություն ունեցած մասնակիցների մոտ առավել հաճախ դիտարկվել են ներքին տագնապայնություն, ապագայի նկատմամբ անորոշության զգացում և խուսափողական վարքային միտումներ, որոնք դրսևորվել են հուզական ինքնամեկուսացմամբ և սոցիալական պասիվությամբ:

Միաժամանակ հետազոտության ընթացքում արձանագրվել են նաև հոգեբանական ռեզիլենտության դրսևորումներ: Հարցվածների մի մասը, չնայած տրավմատիկ փորձառություններին, ցուցաբերել է կյանքի արժեքների վերաիմաստավորման և հոգեբանական կայունության վերականգնման միտումներ: Հոգեբանական տեսանկյունից սա կարելի է դիտարկել որպես հետտրավմատիկ աճի դրսևորում, երբ ճգնաժամային փորձառությունը դառնում է անձի ներքին վերափոխման և հոգեբանական հասունացման խթան (Tedeschi & Calhoun, 2004):

Այսպիսով, հետազոտական արդյունքները վկայում են, որ հետպատերազմյան արժեհամակարգային ճգնաժամը ունի բազմաշերտ հոգեբանական բնույթ և արտահայտվում է անձի արժեքային, հուզական և վարքային համակարգերի փոխկապակցված վերափոխումներով:

Հետպատերազմյան արժեհամակարգային ճգնաժամի հաղթահարման գործընթացում առաջնային նշանակություն ունի հոգեբանական աջակցության համակարգված կազմակերպումը, որը պետք է ուղղված լինի անձի ներքին հոգեբանական հավասարակշռության վերականգնմանը, սոցիալական վստահության ամրապնդմանը և կյանքի իմաստավորման նոր հիմքերի ձևավորմանը:

Հետպատերազմյան արժեհամակարգային ճգնաժամի հաղթահարումը պահանջում է համալիր հոգեբանական և սոցիալական մոտեցումներ: Առաջնային նշանակություն ունի հոգեբանական աջակցության կազմակերպումը, որը պետք է ուղղված լինի տրավմատիկ փորձառությունների մշակմանը, հուզական կայունության վերականգնմանը և սոցիալական ադապտացիային:

Հոգեբանական խորհրդատվությունը կարևոր դեր ունի անձի ներքին ռեսուրսների ակտիվացման և կյանքի իմաստավորման վերականգնման գործընթացում: Հատկապես արդյունավետ են էքզիստենցիալ և իմաստաստեղծ մոտեցումները, որոնք նպաստում են կյանքի նոր նպատակների ձևավորմանը և ներքին հավասարակշռության վերականգնմանը:

Սոցիալական աջակցության համակարգերը նույնպես մեծ նշանակություն ունեն հետպատերազմյան ադապտացիայի համար: Ընտանիքը, համայնքը և

սոցիալական խմբերը կարող են հանդես գալ որպես հոգեբանական անվտանգության և հուզական կայունության աղբյուր։ Սոցիալական կապերի վերականգնումը նպաստում է վստահության աճին և մեկուսացման հաղթահարմանը։

Կարևոր նշանակություն ունի նաև հոգեկրթական ծրագրերի իրականացումը, որոնք նպաստում են տրավմայի վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը, սթրեսի կառավարման հմտությունների զարգացմանը և ռեզիլենտության ձևավորմանը։

Հետպատերազմյան պայմաններում արդյունավետ կարող են լինել նաև խմբային հոգեբանական միջամտությունները, որոնք հնարավորություն են տալիս անձանց կիսել իրենց փորձառությունները, ստանալ սոցիալական աջակցություն և վերականգնել համայնքային կապերը։

Այսպիսով, հետպատերազմյան արժեհամակարգային ճգնաժամի հաղթահարումը պահանջում է երկարաժամկետ և համակարգային մոտեցում, որը ներառում է ինչպես անհատական, այնպես էլ սոցիալական միջամտություններ։

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետպատերազմյան շրջանը հանդիսանում է բարդ սոցիալ-հոգեբանական իրականություն, որի պայմաններում անձի արժեհամակարգը ենթարկվում է խորքային վերափոխումների։ Պատերազմական փորձառությունները, տրավմաները, սոցիալական անորոշությունը և անվտանգության զգացման խաթարումը նպաստում են արժեքային համակարգի ապակայունացմանը, կյանքի իմաստի վերաիմաստավորմանը և վարքային փոփոխություններին։

Հետազոտությունը ցույց է տալիս, որ հետպատերազմյան արժեհամակարգային ճգնաժամը դրսևորվում է արժեքների հիերարխիայի խախտմամբ, սոցիալական վստահության անկմամբ, էքզիստենցիալ ճգնաժամով, վարքային դեզադապտացիայով և ինքնության վերափոխմամբ։ Միաժամանակ այն կարող է դառնալ հոգեբանական աճի, նոր արժեքների ձևավորման և ռեզիլենտության զարգացման հիմք։

Հոգեբանական աջակցությունը, սոցիալական համախմբումը և իմաստաստեղծ միջամտությունները կարևոր դեր ունեն հետպատերազմյան պայմաններում անձի հոգեբանական վերականգնման և սոցիալական ադապտացիայի գործընթացում։ Այս առումով հետպատերազմյան արժեհամակարգային ճգնաժամի ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի ինչպես տեսական, այնպես էլ կիրառական հոգեբանության զարգացման համար։

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

**Леонтьев Д. А**. (2003). *Психология смысла*. Москва: Смысл.

**Рубинштейн С. Л**. (2002). *Основы общей психологии*. Санкт-Петербург: Питер.

**Frankl V.** (1963). *Man's Search for Meaning*. Boston, MA: Beacon Press.

**Rokeach M**. (1973). *The Nature of Human Values*. New York, NY: Free Press.

**Schwartz S. H**. (1992). Universals in the content and structure of values. *Advances in Experimental Social Psychology, 25*, 1–65. Retrieved May 7, 2026, from: https://www.sciencedirect.com/science/article/pii/S0065260108602816 content and structure of values. *Advances in Experimental Social Psychology, 25*, 1–65.

**Tedeschi R. & Calhoun L**. (2004). Posttraumatic growth: Conceptual foundations and empirical evidence. *Psychological Inquiry, 15*(1), 1–18. Retrieved May 7, 2026, from: https://www.tandfonline.com/doi/abs/10.1207/s15327965pli1501_01

## REFERENCE LIST

**Leont'ev D. A**. (2003). Psihologiya smysla *(Psychology of meaning)*. Moskva: Smysl.

**Rubinshtejn S. L**. (2002). Osnovy obshchej psihologii *(Bases of General Psychology)*. Sankt-Peterburg: Piter.

**Frankl V.** (1963). *Man's Search for Meaning*. Boston, MA: Beacon Press.

**Rokeach M**. (1973). *The Nature of Human Values*. New York, NY: Free Press.

**Schwartz S. H**. (1992). Universals in the content and structure of values. *Advances in Experimental Social Psychology, 25*, 1–65. Retrieved May 7, 2026, from: https://www.sciencedirect.com/science/article/pii/S0065260108602816 content and structure of values. *Advances in Experimental Social Psychology, 25*, 1–65.

**Tedeschi R. & Calhoun L**. (2004). Posttraumatic growth: Conceptual foundations and empirical evidence. *Psychological Inquiry, 15*(1), 1–18. Retrieved May 7, 2026, from: https://www.tandfonline.com/doi/abs/10.1207/s15327965pli1501_01

## РЕЗЮМЕ

## ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ЦЕННОСТНОГО КРИЗИСА ЛИЧНОСТИ В ПОСЛЕВОЕННЫЙ ПЕРИОД

**Вардуи Манукян, Шушанна Григорян**

Цель статьи — изучение психологических характеристик кризиса системы ценностей человека в послевоенный период. Социально-психологическая среда,

формирующаяся после войны, обусловливает существенные изменения в системе ценностей личности, социальных установках, поведенческих моделях и процессах смыслообразования. В статье рассматривается влияние послевоенного травматического опыта на процесс дестабилизации ценностной системы личности, психологические последствия снижения социального доверия, а также особенности поведенческих реакций личности.

Теоретическую основу исследования составили теория ценностей М. Рокича и концепция ценностных ориентаций Ш. Шварца, а также подход В. Франкла к проблеме смыслообразования. В статье отражены результаты экспериментального исследования, проведённого среди лиц, имеющих послевоенный опыт. В ходе исследования были применены методы психологической беседы, методика М. Рокича «Ценностные ориентации» и метод опроса. Анализ полученных данных показал, что в послевоенных условиях для большинства участников приоритетными стали ценности, связанные с безопасностью, сохранением семьи и психологической стабильностью, тогда как снизилась значимость профессиональной самореализации, социальной активности и ценностных ориентаций, связанных с планированием будущего.

Результаты исследования свидетельствуют о том, что послевоенный ценностный кризис преимущественно проявляется в нарушении внутреннего психологического равновесия личности и усилении чувства неопределённости в отношении будущего. Вместе с тем у части участников была отмечена тенденция к переосмыслению жизненных ценностей и стремление к восстановлению психологической устойчивости.

Статья может иметь прикладное значение в процессе организации психологической поддержки, социальной адаптации и разработки психопросветительских программ в послевоенных условиях.

***Ключевые слова**: послевоенный период, ценностный кризис, посттравматическое стрессовое расстройство, социальное доверие, психологическая резильентность, ценностные ориентации, посттравматический рост.*

## SUMMARY

## PSYCHOLOGICAL CHARACTERISTICS OF THE PERSONALITY VALUE CRISIS IN THE POST-WAR PERIOD

**Varduhi Manukyan, Shushanna Grigoryan**

The goal of the article is to study the psychological characteristics of a person's value system

crisis in the post-war period. The socio-psychological environment formed after the war causes significant transformations in the individual's value system, social attitudes, behavioral models, and meaning-making processes. The article examines the influence of post-war traumatic experiences on the destabilization of the individual's value system, the psychological consequences of decreased social trust, and the characteristics of behavioral responses.The theoretical analysis is based on M. Rokeach's theory of values and S. Schwartz's concept of value orientations, with reference to V. Frankl's meaning-centered approach. The article also reflects the results of an experimental study conducted among individuals with post-war experience. During the research, the methods of psychological interview, M. Rokeach's "Value Orientations" methodology, and the survey method were applied. The analysis of the obtained data showed that under post-war conditions the majority of participants prioritized values related to security, family preservation, and psychological stability, while value orientations associated with professional self-realization, social activity, and future planning decreased.

The research findings indicate that the post-war value crisis is mainly manifested through the disruption of the individual's internal psychological balance and the intensification of uncertainty about the future. At the same time, some participants demonstrated a tendency toward reconsidering life values and restoring psychological stability.

The article may have practical significance in the development of psychological support, social adaptation, and psychoeducational programs in post-war conditions.

***Keywords**: post-war period, value crisis, post-traumatic stress disorder, social trust, psychological resilience, value orientations, post-traumatic growth.*

*Հոդվածը ստացվել է՝ 12.02. 2026*
*Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 15.02. 2026*
*Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 02.04.2026*